ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2017-2022 ԹԹ.
2018-2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ԱԲՀ-ն 2018-2019 ուստարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է 2017-2022թթ. Զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան:

ՌԶԾ իրականացման պլան-ժամանակացույցով սահմանված են այդ խնդիրներին համապատասխան գործողությունների կատարման ժամկետները, պատասխանատուները, պահանջվող ռեսուրսները և ակնկալվող արդյունքները:

ԱԲՀ-ի 2017-22թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 7 նպատակների իրականացման համար սահմանված են 14 խնդիր՝ 77 գործողություններով, որոնք ներառված են ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններում:

1.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

<u>Բարձրացնել կառավարման արդյունավետությունը և կատարելագործել վարչարարությունը</u>

Խնդիր 1.1. Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և գործառույթների արդյունավետ ու հստակ գործառություն:

Գործողություն 3. *Արդի պահանջներին համապատասխան լրամշակել ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերը և կանոնակարգերը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ուսումնական գործընթացը կարգավորող վերանայված փաստաթղթեր և կանոնակարգեր:

Տվյալ ուսումնական տարում ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերից վերանայվել է 2014 թվականից գործող պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգը, որը տեղադրվել է ԱԲՀ-ի պաշտոնական կայքում: Ուսանողներին իրազեկելու նպատակով դեկանի և խորհրդատուների կողմից կազմակերպվել են հանդիպումներ:

Ի տարբերություն նախորդ կարգի՝ այստեղ փոխվել է 2.5 կետը, որը վերաբերում է արտերկրի կլինիկական բազաներում պրակտիկաների կազմակերպմանը: Ավելացել է պրակտիկան չհանձնելու դեպքում ուսանողին ընձեռվող հնարավորության մասին 4.5 կետը, ըստ որի պրակտիկայից

ակադեմիական պարտք ունեցող ուսանողի համար կազմակերպվում է լրացուցիչ պրակտիկա արդեն վճարովի հիմունքներով:

Անհրաժեշտություն կա վերանայելու նաև 2014-ից գործող Դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգը:

Գործողություն 4. *Ապահովել համալսարանի կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների հրապարակայնությունը, հասանելիությունը և մատչելիությունը բոլոր շահառուների համար:*

Ակնկալվող արդյունք. Կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների առկայություն համալսարանի պաշտոնական կայքում:

Կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների քաղվածքները առկա են բոլոր ստորաբաժանումներում: Փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության կառավարումը առավել համակարգելու, վարչարարության որակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է հզորացնել կայքի հնարավորությունները, թվայնացնել բոլոր փաստաթղթերը և ապահովել կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների առկայությունը համալսարանի պաշտոնական կայքում:

Գործողություն 5. *Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն՝ ուղղված ստորաբաժանումների համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությանը:*

<u>Ակնկալվող արդյունք.</u> Շահակիցներին բավարարող մարդկային ռեսուրսների կառավարման մշակված և հաստատված քաղաքականություն:

ՄՌԿ կառավարման քաղաքականությունը դեռևս մշակվում է, իսկ ստորաբաժանումների համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությունը իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների ընտրությամբ: Վերջին ժամանակահատվածում նախապատվությունը տրվում է հատկապես անգլերենի իմացությամբ մասնագետների ընտրությանը:

	Աշխատակիցներ	2016		2017		2018	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
1.	Դասավանդող						
	Անգլերեն	27	*41,0*	38	*56,7*	43	*76.7*
	Ռուսերեն	66	*100*	67	*100*	56	*100*
2.	Վարչական աշխատող						
	Անգլերեն	3	*19*	4	*23.5*	7	*46.6*
	Ռուսերեն	16	*100*	17	*100*	15	*100*

Խնդիր 1.2. Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում՝ կառավարման տեղեկատվական վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:

Գործողություն 1. *Ստեղծել համալսարանի կառավարման միասնականացված տեղեկատվական համակարգ:*

Ակնկալվող արդյունք. Համալսարանի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի առկայություն:

Առայժմ համալսարանը չունի միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգ՝ մեկ ընդհանուր բազայով: Համալսարանում գործում է ուսումնական գործընթացի կառավարման միասնական տեղեկատվական էլեկտրոնային համակարգ՝ ուսանողների ակադեմիական տվյալները մուտքագրելու և առաջադիմությունը հաշվարկելու, շարժը ամրագրելու և այլ գործընթացների նպատակով: Տվյալ համակարգը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող մեծածավալ բազան, ուսումնական գործընթացը դարձնում վերահսկելի և թափանցիկ:

Գործողություն 3. *Շարունակել ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ համալսարանի կառավարման ոլորտում:*

Ակնկալվող արդյունք. Համալսարանի կառավարման ոլորտում գործող արդիական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

Ընթացքի մեջ է փաստաթղթաշրջանառության միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացը: Համաձայն պլանի այն ամբողջովին կգործի 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից:

Գործողություն 2. *Զարգացնել համալսարանի տեղեկատվական համակարգերը, ընդլայնել կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում:*

Ակնկալվող արդյունք. Համալսարանի կատարելագործված տեղեկատվական համակարգ:

Տես գործողություն 3.

2.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԱԲՀ-ում ստացած կրթությունից:

Խնդիր 2.1. Վերանայել կրթական գործող ծրագրերը՝ համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին:

Գործողություն 1. *ՄԿԾ-ները, ուսումնական ծրագրերը, պլանները մշտադիտարկել, վերանայել, կատարելագործել հանրապետական և միջազգային առաջադեմ փորձի կիրառմամբ:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Վերանայված, լրամշակված և հաստատված ՄԿԾ-ներ, ուսումնական ծրագրեր և պլաններ:

2018թ. վերանայվել և հաստատվել են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ուսումնական պլանները, առարկայական նկարագրերն ու ծրագրերը:

Հաջորդ ուսումնական տարվա ավարտին նախատեսվում է կազմակերպել մշտադիտարկում:

Գործողություն 2. *Շարունակել կրթական ծրագրերի համապատասխանեցման գործընթացը՝ Բոլոնիայի և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին և ազգային ավանդույթներին:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. ՄԿԾ-ի համապատասխանություն ԵԲԿՏ հիմնարար սկզբունքներին:

ԱԲՀ-ն 2018-2019 ուստարում ՈԱԱԿ է ներկայացրել ինստիտուցիոնալ հավատարմագրման հայտ՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից փորձագիտական գնահատում ստանալու նպատակով:

2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակում ԱԲՀ-ն դիմել է Բելառուսի Գրոդնոյի պետական համալսարան՝ ՄԿԾ-ների որակի բարելավման, արտաքին գնահատման նպատակով: Հաջորդ ուստարում գնահատման արդյունքների հիման վրա կվերանայվեն ԱԲՀ-ի երկու կրթական ծրագրերը՝ հնարավորինս ապահովելով համապատասխանությունը ԵԲԿՏ սկզբունքներին:

Գործողություն 5. *Բարելավել դասավանդվող բոլոր առարկայական դասընթացների նկարագրերը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Վերանայված և հաստատված առարկայական դասընթացների նկարագրեր հայերեն և անգլերեն տարբերակներով: <u>Իրականացվել է</u>:

Գործողություն 4. *Կատարելագործել ՄԿԾ-ների ուսումնաարտադրական պրակտիկայի ձևերը՝ դարձնելով ավելի արդյունավետ և նպատակային:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Վերանայված պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ:

Վերանայվել է պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգը: Հաջորդ ուսումնական տարում կներդրվի ուսումնական գործընթացում:

Գործողություն 5. *Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Հաստատված դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ:

ԱԲՀ-ում գործում է 2014թ.-ին հաստատված դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգը, որի նպատակն է կատարելագործել ամբիոնի դասախոսների մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը, դասը կազմակերպելու և վարելու հմտությունները: Դասալսումները պարբերաբար իրականացվում են դեկանի, ամբիոնի վարիչի կողմից, որի միջոցով վերահսկվում են դասավանդման մեթոդները: Ամբիոնի վարիչի կողմից դասալսումների արդյունքում դասախոսը որոշ դեպքերում փոխել է դասավանդման մեթոդը: Առկա է դասալսումների մատյան՝ իր արձանագրություններով:

Դասալսումներն իրականացվում են նախապես հաստատված ժամանակացույցին համապատասխան: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ, այնուհետև հաշվի են առնվում դասախոսների հետ պայմանագրեր կնքելիս: Դասալսումներ իրականացվում են ինչպես ամբիոնի վարիչի, այնպես էլ այլ դասախոսների կողմից: Դասալսումների ընթացքում լրացվում է ձևաթուղթ, ուշադրություն է դարձվում բացակայություններին, բժշկական բուհին համապատասխանող կարգապահությանը, ամբողջ լսարանի ընդգրկվածությանը դասավանդման գործընթացին, բովանդակային և օրացուցային պլանին համապատասխանությունը:

Սակայն դասալսումների վերլուծություններ՝ ըստ համապատասխան ձևաչափի չեն իրականացվել ամբիոններում և ֆակուլտետներում, որպեսզի առաջարկությունների արդյունքում դուրս բերված խնդիրների հիման վրա պլանավորվեն ու իրականացվեն անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ՝ նպաստելով դասախոսների մասնագիտական առաջընթացին և կրթական ծրագրերում սահմանված նպատակների իրականացմանը:

Գործողություն 6. *Վերամշակել ուսումնամեթոդական փաթեթները և նրանցում առկա առարկայական ծրագրերի նպատակը, խնդիրները և թեմատիկ բովանդակությունը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. ՄԿԾ-ի վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրեր: <u>Առկա են</u>:

Գործողություն 7. *Իրականացնել մշտադիտարկում առարկաների դասավանդման արդյունավետությունը բացահայտելու նպատակով ուսանողների և շրջանավարտների շրջանում:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Արտաքին շահակիցների կարծիքները ՄԿԾ-ի մշտադիտարկման վերաբերյալ նախատեսվում է կազմակերպել 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքներ են տարվում վերոնշյալ գործընթացը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Խնդիր 2.2. Ապահովել կրեդիտային համակարգի ներդրում կրթական ծրագրերում:

Գործողություն 1. *Վերանայել կրթական ծրագրերի բեռնվածությունն ըստ մասնագիտությունների, հստակեցնել դասավանդվող բոլոր առարկաների կշիռն ուսումնական գործընթացում, սահմանել հավասարակշռված հարաբերակցություն ուսանողի լսարանային և արտալսարանային աշխատանքների միջև:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ուսումնական պլաններում տեսական և գործնական հմտությունների ապահովում, ՄԿԾ վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրեր:

<u>Իրականացված է:</u>

Գործողություն 2. *Կատարելագործել ուսանողի գիտելիքի գնահատման մեթոդաբանության հայեցակարգը՝ ներառյալ գնահատականների վերանայման և բողոքարկման մեխանիզմները:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Հաստատված և գործող գիտելիքների գնահատման, վերանայման և բողոքարկման կարգ:

2018-19 ուստարվանից գործում է գիտելիքների ստուգման և գնահատման, բողոքարկման վերանայված կարգը: Անցկացվել են հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի առավելություններն ու թերությունները վեր հանելու, շտկելու, զարգացնելու նպատակով:

Գործողություն 3. *Վերանայել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը, այն համապատասխանեցնելով ECTS-ի ուղենշային փաստաթղթին, ամբողջական անցում կատարել ուսուցման և գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգին:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Գիտելիքների բազմագործոնային գնահատման վերանայված գործող կարգ:

Գիտելիքի ստուգումն ու գնահատումն իրականացվում է ըստ այդ կարգի, որը պարբերաբար կատարելագործվում է:

Գործողություն 4. *Վերանայել ՄԿԾ-ների դասավանդման մեթոդները՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան դասավանդման մեթոդներ:

Իրականացվում է կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան դասավանդման մեթոդների արդիականացում: ***Տես*** *Խնդիր 2.1. Գործողություն 5:*

Գործողություն 5. *Բարձրացնել կրթության որակը՝ շարունակաբար արդիականացնելով և միջազգայնացնելով կրթական ծրագրերը, ապահովել ուսանողների շարժունությունը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ուսանողների ակադեմիական շարժունության գործող կանոնակարգ:

ԱԲՀ-ում գործում են ուսումնառության արդյունքների փոխճանաչման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ, որոնց միջոցով ապահովվում է ուսանողների ներհոսքն արտերկրից, սակայն համալսարանն առայժմ չունի դասախոսների միջազգային ակադեմիական շարժունությանը նպաստող համաձայնագրեր:

Խնդիր 2.3. Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ:

Գործողություն 1. *Կատարելագործել ՊԴ կազմի համալրման մեխանիզմները:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Դասախոսական կազմի ձևավորման և ազատման լրամշակված կանոնակարգ:

ՊԴ կազմի համալրման հստակ, արդիականացված մեխանիզմներ պլանավորվում է ներդնել 2020-2021 ուսումնական տարվանից:

Գործողություն 2. *Ապահովել օտար լեզվի իմացությամբ երիտասարդ որակյալ կադրային ներուժի հոսքը համալսարան:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Օտար լեզվի իմացությամբ որակյալ դասախոսական կազմ (առնվազն 50%):

ԱԲՀ-ն ապահովված է օտար լեզվի իմացությամբ որակյալ դասախոսական կազմով (առնվազն 76%):

Գործողություն 3. *Նպաստել ՊԴ կազմի երիտասարդացմանը՝ սկսնակ դասախոսների, երիտասարդ բժիշկ գիտնականների, շրջանավարտների ներգրավման միջոցով:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Դասախոսական կազմի միջին տարիքը առնվազն 45 տարեկան:

Ներկա ժամանակահատվածում դասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 45 տարեկան:

2018թ.					
Ուսումնական գործընթացում ընդգրկված դասախոսներ	Դասախոս թիվը	Գիտական աստիճան և կոչում		Ընդ. Գիտ.աստ. և կոչում	Միջին տարիք
		Գիտ.դ.պ.	Գիտ. թեկ., դոց		
Հիմնական	28	2-7,1%	11-39,2%	13-46,4%	50
Համատեղ	39	3-8,0%	18-46,1%	21-54,0%	41
Ընդամենը	***67***	***5-7,5%***	***29-44,0%***	***34-51,5%***	***45***

Գործողություն 4. *Իրականացնել ՊԴ կազմի պարբերաբար գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստվածության, դասախոսական աշխատանքի հմտության, դասավանդման մեթոդիկայի և փորձի:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Հաստատված ՊԴ կազմի վարկանիշավորման գնահատման կարգ:

ՊԴ կազմի վարկանիշավորման գնահատում կիրականացվի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում:

Գործողություն 5. *Մշակել ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատման չափանիշներ և դրանց ներդրման գործուն մեխանիզմներ:*

<u>Ակնկալվող արդյունք.</u> Դասախոսի աշխատանքի որակի գնահատման հարցաթերթիկի առկայություն և իրականացված հարցումների արդյունքներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության որակի գնահատման մեխանիզմները և չափանիշները նկարագրված են Որակի ապահովման ձեռնարկում /2018թ./: Ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատման նպատակով առայժմ կիրառվում են հարցաթերթիկային հարցումներ՝ ըստ դասընթացի արդյունավետության և որակական ցուցանիշների գնահատման հարցաշարի:

Խնդիր 2.4. Բարձրացնել համալսարանում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:

Գործողություն 3. *Ընդլայնել համագործակցությունը հանրապետության բժշկական քոլեջների և դպրոցների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր:*

<u>Ակնկալվող արդյունք.</u> Համագործակցության գործող առնվազն 3 պայմանագրեր: Աշխատանքները դեռ ընթացքի մեջ են, բանակցություններ են տարվում մի քանի քոլեջների միջև համագործակցության պայմանագրեր կնքելու ուղղությամբ:

Գործողություն 4. *Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Մշակված և հրատարակված ուսանողի ուղեցույց, համալսարանի պաշտոնական կայք, ֆեյսբուքյան էջ:

Օտարերկրյա դիմորդների հավաքագրման, ներգրավման բազմաբնույթ միջոցառումներն ամփոփված են Արտաքին կապերի բաժնի 2017-2018 ուստարվա հաշվետվության մեջ:

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

<u>Համալսարանում ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող որակյալ ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ</u>

Խնդիր 3.1. Համալրել և կատարելագործել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

Գործողություն 1. *Իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց՝ գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Առկա ռեսուրսների գնահատման արդյունքում արդիականացված նյութատեխնիկական բազա:

Ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի կատարելագործումը և համալրումը իրականացվում է պարբերաբար՝ ամբիոնի տարեվերջյան նիստերում պարտադիր քննարկվում են դասավանդման և ուսումնառության նյութերի, ռեսուրսների նորացման և համալրման հարցերը:

Գործողություն 2. *Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների, լաբորատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթաց:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Վերանորոգված և կահավորված լսարաններ, մասնագիտացված կաբինետներ և լաբորատորիաներ:

ՌԶԾ-ով պլանավորված է կառուցել ուսումնական, կլինիկական նոր մասնաշենքեր:

Գործողություն 3. *Լսարանները, կաբինետները և լաբորատորիաները համալրել համակարգիչներով, պրոյեկտորներով, սարքավորումներով, դիդակտիկ նյութերով և ուսումնական գործընթացը խթանող այլ միջոցներով:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված կրթական միջավայր:

Համալսարանում բոլոր ուսումնական լսարանները և կաբինետները հագեցված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Գործողություն 4. *Ընդլայնել համալսարանի գիտաբժշկական կենտրոնի տարածքը, համալսարանի ուսումնաօժանդակ 2-րդ մասնաշենքը տրամադրել գիտաբժշկական կենտրոնին և իրականացնել վերանորոգման և կահավորման աշխատանքներ:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման բարելավված պայմաններ:

Արդիականացվել են գիտաբժշկական ուսումնական կենտրոնի պայմանները, որի արդյունքում բարելավվել է գիտահետազոտական աշխատանքների իրականացման պայմանները:

Գործողություն 5. *Պարբերաբար արդիականացնել տեխնիկական ու տեղեկատվական միջոցները, բարձրացնել համացանցի արագությունը և ապահովել ազատ մուտք համացանց:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Համալսարանում համացանցից օգտվելու լայն հնարավորություն:

Համալսարանում առկա է համացանցից օգտվելու լայն հնարավորություն:

Գործողություն 6. *Ապահովել գրադարանային գործունեության զարգացումը, համալրել գրադարանի նյութատեխնիկական բազան համակարգիչներով, ինտերնետ կապով, էլեկտրոնային գրքային ֆոնդերով:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Գրադարանային ռեսուրսներից օգտվելու մատչելիություն:

Արդիականացվել է համալսարանի գրադարանային ֆոնդը, ընթերցասրահում ավելացվել են համակարգիչները: Բարելավվան աշխատանքների արդյունքում գրադարանային ռեսուրսներից օգտվելը դարձել է առավել մատչելի:

Գործողություն 7. *Ապահովել գրադարանի և ներքին շահակիցների փոխադարձ կապը, վերհանել գրադարանից օգտվողների կարիքները, կատարել հարցում գրադարանի ծառայությունների որակի վերաբերյալ:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ուսանողների և դասախոսների շրջանում իրականացված հարցումների արդյունքներ:

2018-19 ուստարում ռեսուրսներից ուսանողների բավարարվածության հարցումներ չեն իրականացվել: Աշխատանք է տարվում մասնագիտական գրականության թիվն ավելացնելու ուղղությամբ: Հաշվի առնելով ուսանողների կարիքները և էլեկտրոնային գրականությունից օգտվելու պահանջարկը՝ գրադարանը համալրվել է հիմնականում էլեկտրոնային ռեսուրսներով: Մշակվել է անգլերենով ուսանողների կարիքների վերհանման հարցաթերթիկ, որն էլ նախատեսվում է

կազմակերպել 2019-2020 ուստարվա ընթացքում: Ստացված արդյունքները կամփոփվեն և կտրվի համապատասխան լուծում:

Խնդիր 3.2. Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում:

Գործողություն 1. *Բյուջեն պլանավորելիս հաշվի առնել առաջիկա տարիների ընդունելության մոտավոր դինամիկան:*

Ակնկալվող արդյունք. Ֆինանսական միջոցների նպատակային հատկացումներ համաձայն ռազմավարական նպատակների և ուղղությունների:

Յուրաքանչյուր տարվա վերջում համալսարանի ղեկավարությունն իրականացնում է աշխատանքներ հաջորդ ուսումնական տարվա պոտենցիալ դիմորդների հոսքի ապահովման ուղղությամբ: Մասնավորապես՝ կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ արտասահմանյան դեսպանատների ներկայացուցիչների հետ, տպագրվել են տեղեկատվական բուկլետներ, համալսարանի պաշտոնական կայքում տեղադրվել են հայտարարություններ և այլն: Բյուջեի պլանավորումը իրականացվում է մինիմում պոտենցիալ դիմորդների թվաքանակով:

Գործողություն 2. *Իրականացնել ֆինանսական հավելյալ աղբյուրների ներգրավման գործընթաց:*

Ակնկալվող արդյունք. Ֆինանսական հոսքերը խթանող ծրագրերի իրականացում:

Այս ուղղությամբ իրականացվում են բավականին լուրջ և հավասարակշռված աշխատանքներ: Մասնավորապես. ԳԲՈՒԿ-ի կողմից հասարակությանը մատուցվում են մասնագիտական տարբեր վճարովի ծառայություններ, որոնք ևս որոշ ֆինանսական հոսքեր են ապահովում:

Գործողություն 3. *Մշակել ՊԴ կազմի աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմներ՝ ըստ ուսումնական, գիտահետազոտական ծանրաբեռնվածության:*

Ակնկալվող արդյունք. ՊԴ կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաստատված հաշվարկի նորմեր:

Տարեվերջին ամբիոնները ՊԴ կազմի աշխատանքի կատարողականի հաշվետվություն են ներկայացնում ուսումնական մաս:

Գործողություն 4. *Մշակել և ներդնել ուսանողների ֆինանսական աջակցության համակարգ:*

Ակնկալվող արդյունք. Ուսանողների առաջադիմության խրախուսման հաստատված կարգ:

Հաշվի առնելով համալսարանում ուսումնառողների կարգավիճակը (գերակշիռ մասը այլազգի են) այս աշխատանքները դեռ նախագծվում են: Համալսարանում ունենք ուսման վարձի մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողներ: Չնայած համալսարանի ֆինանսական միջոցների

սղությանը, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների նկատմամբ և այլ դեպքերում կիրառվում են ուսման վարձի զեղչեր /0,4 %/:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել ուսանողներին մատուցվող ծառայությունները, խթանել դիմորդների հոսքը համալսարան և ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

Խնդիր 4.1. Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Գործողություն 1. *Ակտիվացնել ՈՒԽ աշխատանքները, խրախուսել ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունները, միջոցառումների կազմակերպումը դարձնել բազմաբնույթ:*

Ակնկալվող արդյունք. Արտալսարանային միջոցառումների ակտիվացում (արձանագրություններ):

Ուսանողական խորհուրդի գործունեությունը, տարատեսակ մարզամշակութային միջոցառումների կազմակերպումն ամփոփված է ուսխորհրդի հաշվետվության մեջ՝ տեղադրված ԱԲՀ-ի կայքում:

Գործողություն 2. *Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը համալսարանի կառավարմանը:*

Ակնկալվող արդյունք. Կառավարման մարմիններում ուսանողների ներգրավվածություն:

Վերանայվել են կառավարման խորհրդի և գիտական խորհրդի կազմերը: Կառավարման մարմիններում ներգրավված են ուսանողներ:

Գործողություն 3. *Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և վերահսկողության գործընթացում:*

Ակնկալվող արդյունք. ՄԿԾ-ների մշակման և վերանայման աշխատախմբերում ուսանողների առկայություն:

ՄԿԾ-ների մշակման և վերանայման աշխատախմբերում ներառված են ուսանողներ:

Գործողություն 4. *Նպաստել ուսանողների կրթական, գիտական, բարոյական, հոգևոր և մշակութային աշխարհայացքի զարգացմանն ու հարստացմանը:*

Ակնկալվող արդյունք. ՄԿԾ-ի անհրաժեշտ վերջնարդյունքների ձեռքբերում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսխորհրդի կողմից կազմակերպված միջոցառումների արձանագրություններ, հատկացված ֆինանսական միջոցներ:

Գործողություն 5. *Իրականացնել միջոցառումներ, ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական միջոցների հատկացում (արձանագրություններ):

Հաշվի առնելով համալսարանի ուսումնառողների կրոնական, ազգային առանձնահատկությունները՝ 2018-2019 ուստարվա ընթացքում անցկացվել են մի շարք միջոցառումներ, որոնք լուսաբանվել են ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջում: Համալսարանի հետ համագործակցող դեսպանատների, մասնավորապես Իրանի Իսլամական հանրապետության և Հնդկաստանի հանրապետության ներկայացուցիչների հետ տարվա ընթացքում կազմակերպվել են ցերեկույթներ բոլոր ուսանողների և դասախոսների մասնակցությամբ: Հաջորդ ուստարվա ընթացքում պլանավորվում է կազմակերպել այցելություններ Հայաստանի մարզեր, պատմամշակույթային կենտրոններ և այլն:

Գործողություն 7. *Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովում:

Համալսարանում ձևավորված է և գործում է խորհրդատուների ինստիտուտը: Ինչպես մասնագիտական, այնպես էլ հումանիտար ամբիոններում գործում է մասնագիտական խորհրդատվության ծառայությունը: Բոլոր խորհրդատուները տիրապետում են օտար լեզվին և կարող են անհրաժեշտության դեպքում ուսումնառողներին տալ սպառիչ պատասխան և անհրաժեշտ խորհրդատվություն: Համալսարանում ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով գործում է հաստատված ուսանողի ուղեցույցը:

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները համալսարանական և ծրագրային մակարդակներում

Խնդիր 5.1. Ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացումը Եվրոպական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում:

Գործողություն 6. *Ստեղծել հիմքեր օտար լեզվով ՄԿԾ-ների ներդրման համար, կազմակերպել օտարերկրյա ուսանողների ընդունելություն:*

Ակնկալվող արդյունք. Նախապատրաստական քայլերի և կատարված աշխատանքների հաշվետվություններ:

Համալսարանում գործում է Արտաքին կապերի բաժին, որն էլ կազմակերպում և զբաղվում է օտարերկրյա դիմորդների փաստաթղթերի հավաքագրման և ուսումնասիրման աշխատանքներով: Հավաքագրված փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է ՀՀ ԿԳ նախարարության արտաքին կապերի բաժին: 2017-2018 ուստարում համալսարանում ստեղծվել են համապատասխան հիմքեր՝ օտար լեզվով ՄԿԾ-ների իրականացման համար: (Արտաքին կապերի բաժնի հաշվետվություն):

Խնդիր 5.2. Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը:

Գործողություն 1. *Ակտիվացնել համալսարան-հասարակություն կապը, նպաստել բուհի վարկանիշի բարձրացմանը՝ ընդլայնել համագործակցությունը տպագիր և էլեկտրոնային մամուլի հետ՝ ներկայացնելով համալսարանի առանձնահատկությունները և ձեռքբերումները:*

Ակնկալվող արդյունք. Համալսարանի մասին տեղեկատվության տարածում և հանրային իրազեկում:

Համալսարանի մասին տեղեկատվության տարածումը և հանրային իրազեկումը, փոխադարձ նամակագրությունը, հարցերի պարզաբանումներն իրականացվում են Համալսարանի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով (Արտաքին կապերի բաժնի հաշվետվությունը):

Գործողություն 2. *Պատրաստել տեսաֆիլմեր՝ համալսարանի գործունեությունը լուսաբանելու նպատակով, մասնակցել կրթական ցուցահանդեսներին, ներկայացնել համալսարանի գործունեությունը և կրթական ծրագրերը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Համալսարանի լուսաբանում տեսաֆիլմերի և բուկլետների միջոցով:

Համալսարանի գործունեության վերաբերյալ լուսաբանման նպատակով պարբերաբար նկարահանվում են տեղեկատվական, ճանաչողական տեսաֆիլմեր և բուկլետներ: Տեսանյութերը տեղադրվել են համալսարանի ֆեյսբուքյան էջում, իսկ տեղեկատվական բուկլետները հանրությանն են հասնում տարբեր ճանաչողական միջոցառումների ժամանակ:

Գործողություն 3. *Համալսարանի կրթական առավելությունները հանրությանը հասանելի դարձնելու նպատակով, ՀԼՄ-ներում և համացանցային կայքերում տեղադրել համալսարանին վերաբերող գովազդային նյութեր և դրանք դարձնել առավել հասանելի հանրությանը:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Համալսարանի կրթական գործունեության մասին տեղեկատվության տարածում:

Նկարահանվում է Համալսարանի կրթական գործունեության մասին տեղեկատվական տեսանյութեր, որոնք հասանելի կլինեն հանրությանը ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջում:

Գործողություն 5. *Իրականացնել ընդունելության ուղղությամբ նպատակային համագործակցություն հանրապետական և արտասահմանյան բժշկական քոլեջների հետ, կնքել համաձայնագրեր:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Բժշկական քոլեջների հետ կնքված համաձայնագրեր:

Համալսարանի ղեկավարությունը աշխատանքներ է տանում բժշկական քոլեջների հետ համաձայնագրերի կնքման ուղղությամբ:

6.ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<u>Ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և՝հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը</u>

6.1.Նպաստել Համալսարանում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Գործողություն 1. *Նպաստել ՊԴ կազմի մասնագիտական որակների կատարելագործմանը:*

2019-2020 ուստարվա ընթացքում պլանավորվում է կազմակերպել միջազգային մասնագիտական վերապատրաստում:

<u>Ակնկալվող արդյունք</u>. ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում:

2018-2019 ուստարում կազմակերպվել են վերապատրաստումներ անգլերենով դասավանդող 20 դասախոսի և ուսումնաօժանդակ կազմի համար, նրանց շնորհվել է անգլերենի B2 մակարդակի իմացության հավաստագրեր: Համալսարանը ֆինանսական միջոցների սղության պատճառով դասախոսների մասնագիտական առաջընթացի համար վերապատրաստումներ չի կազմակերպել, սակայն դասախոսները սեփական նախաձեռնությամբ մասնակցել են մի շարք վերապատրաստումների և սեմինարների:

ԱԲՀ-ի ֆինանսական հատկացումները կնպաստեն դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը, ինչպես նաև որակյալ ծառայությունների մատուցմանը:

Գործողություն 2. *Կազմակերպել գիտամեթոդական սեմինարներ ՊԴ կազմի և ուսանողների համար՝ դրանց արդյունքում հրատարակելով գիտական հոդվածների ժողովածուներ:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Գիտական մասի հաշվետվություն:

Առայժմ Համալսարանը գիտական հոդվածների ժողովածու չի հրատարակել:

Գործողություն 4. *Բարելավել դասախոսների գիտահետազոտական գործունեության իրականացման պայմանները:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու ժամանակակից պայմաններ, իրականացված առնվազն 4 աշխատանք:

Համալսարանում առկա են գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար ժամանակակից բավարար պայմաններ, իսկ մինչև գործող ՌԶԾ-ի ավարտը, պլանավորվում են իրականացնել համապատասխան հետազոտական աշխատանքները:

Գործողություն 5. *Զարգացնել և արդիականացնել ուսումնական և լաբորատոր պայմանները՝ համապատասխանեցնելով կրթական և հետազոտական կարիքներին:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Հետազոտությունների արդյունքների ներդրում կրթական գործընթացում:

Ուսումնական և լաբորատոր պայմանները ՌԶԾ-ով նախատեսված է պարբերաբար արդիականացնել կրթական և հետազոտական կարիքներին համապատասխան: Համալսարանի ներքին շահակիցների կարիքների վերհանման արդյունքում ամբողջովին արդիականացվել են ուսումնական և լաբորատոր պայմանները, սակայն ֆինանսական միջոցներ չեն հատկացվել գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար:

6.2. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Գործողություն 6. *Նպաստել հանրապետական և միջազգային վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում համալսարանի դասախոսների հոդվածների և ուսումնասիրությունների հրատարակությանը:*

Ակնկալվող արդյունք. Գիտական մասի հաշվետվություն:

2018-2019 ուստարում ՀՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրվել է 10 հոդված:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացը համապատասխանեցնել բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական և ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին և ուղենիշներին:

Գործողություն 1. Համալսարանում ձևավորել որակի ներքին ապահովման մշակույթ և նպաստել համակարգի զարգացմանը:

Ակնկալվող արդյունք. Որակի ներքին ապահովման ձեռնարկ:

Համալսարանում առկա է որակի ապահովման բաժին: Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է որակի ներքին ապահովման ձեռնարկը և որակի ներքին ապահովման քաղաքականությունը: ՈԱԲ-ի և ՈԱՀ-ի կողմից աշխատանքներ են տարվում համալսարանում ձևավորել որակի ներքին ապահովման մշակույթ: Ներկայումս որակի ապահովման մշակույթը դեռևս կայացման փուլում է:

Գործողություն 2. Մշակել և զարգացնել կրթության որակի շարունակական բարելավման քաղաքականությունն ու ընթացակարգերը

Ակնկալվող արդյունք. ՈԱ քաղաքականություն:

/**Տես գործողություն 1:**

Գործողություն 3. Որակի ներքին ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդլայնել համագործակցությունը հանրապետական այլ բուհերի նմանօրինակ կառույցների հետ:

Ակնկալվող արդյունք. Որակի ներքին ապահովման խորհրդակցությունների և միջոցառումների հաշվետվություններ և արձանագրություններ:

Հաշվետու ժամանակահատվածում առկա է համագործակցության համաձայնագրեր հանրապետական երկու բուհերի՝ Գլաձորի և ՀՖԿՍՊԻ-ի հետ:

Գործողություն 4. *Ապահովել որակի ներքին ապահովման հանձնաժողովի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ բոլոր գործընթացներում:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Հաշվետվությունների և արձանագրությունների առկայությունը ԱԲՀ-ի պաշտոնական կայքում:

2017-2022թթ. ՌՀԾ-ով ՈԱՀ-ի աշխատանքները իրականացնում է ՈԱԲ-ի հետ համատեղ: ՈԱՀ-ի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդին: Հաշվի առնելով համալսարանի կառուցվածքային առանձնահատկությունները, ՈԱՀ-ի գործունեությունը թափանցիկ և հրապարակային է, քանի որ ցանկացած հարց կամ խնդիր լուծվում է քննարկումների միջոցով:

Հաշվետվությունները և արձանագրությունները կտեղադրվեն ԱԲՀ-ի պաշտոնական կայքում:

Գործողություն 5. *Որակի ներքին ապահովման գործընթացներում շահակիցների ակտիվ ներգրավվածություն:*

<u>Ակնկալվող արդյունք</u>. Վերանայված հանձնաժողովների կազմ:

ՈԱԲ-ի կողմից իրականացվող աշխատանքներում ներգրավված են սահմանափակ թվով ներքին և արտաքին շահակիցներ:

Գործողություն 6. Ինստիտուցիոնալ ինքնագնահատում կատարելու անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

<u>Ակնկալվող արդյունք</u>. Ինքնավերլուծության զեկույց:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջովին պատրաստ է Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության փաթեթը: 2018-2019 ուստարվա վերջում այն ինստիտուցիոնալ հավատարմագրման հայտի հետ միասին կներկայացվի ՈԱԱԿ:

ԱԲՀ-ի 2017-2022թթ. ռազմավարական գործունեության 2017-2018 ուստարվա ժամանակաշրջանն ամփոփելով՝ կարելի է նշել, որ համալսարանը հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված խնդիրները հիմնականում իրականացրել է, կան խնդիրներ, որոնք իրականացվել են մասնակի՝ ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով:

Ռազմավարական ծրագրի իրականացումը համալսարանի ղեկավարության անմիջական ուշադրության կենտրոնում է, գործընթացներն իրականացվում են ըստ պլան-ժամանակացույցի և ընթացքի մեջ են:

ԳԽ կից ՈԱՀ-ի նախագահ՝ Ն.Սարիբեկյան